

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՆԵԼԼԻ ԱՇՈՏԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

**ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ ՀՀ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻ ԱՆԳԼԵՐԵՆԻ
ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ**

**ԺԳ. 00. 02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»
(անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
արենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների
թեկնածու, պրոֆեսոր Կ. Մ. Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների
դոկտոր, դոցենտ Ն. Ե. Դալյան

մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ա. Մ. Մանուկյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. ապրիլի 1-ին՝
ժամը 12⁰⁰-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանում գործող ԲՈԿ –ի «Մանկավարժություն» ՕԶՕ մասնագիտական
խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. փետրվարի 19-ին:

Մասնագիտական ՕԶՕ խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝

Ա. Հ. ՍՎԱԶՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Ժամանակակից դպրոցին ներկայացվող պահանջները և աշխարհաքաղաքական զարգացումների արդի ընթացքները հանրակրթությանը թելադրում են որոշ դրույթների վերանայման անհրաժեշտություն, ուսուցման նպատակների, ձևերի, եղանակների, միջոցների ընտրության հարցում նորովի մոտեցումներ ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաների բաղադրատարրերի արդյունավետ կիրառում: Հարցադրումների նման համատեքստում անհրաժեշտություն է ծագում վերանայել անգլերենի դպրոցական դասագրքերը, մասնավորապես՝ բովանդակային առումով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գիտելիքների յուրացման հիմնական աղբյուրներից է դասագիրքը:

Հայտնի է, որ դասագրքերը կառուցվում են ըստ պետական չափորոշչի և ծրագրի, և ամեն մի դասագիրք նախ պետք է համապատասխանի գիտության ժամանակակից պահանջներին, նաև պետք է բխի արդիականության հրատապ հարցից՝ զարգացնող կրթության անհրաժեշտությունից:

Այս լույսի ներքո անգլերենի ուսուցման գործընթացն անհնար է պատկերացնել առանց այնպիսի դասագրքերի, որոնք կոչված են աշակերտին փոխանցելու անհրաժեշտ տեղեկատվություն հոգևոր, մտավոր, ֆիզիկական մշակույթի տարբեր բնագավառների վերաբերյալ, ինչպես նաև լայն պատկերացում տալու համապատասխան երկրների, ժողովուրդների, հայրենիքի աշխարհագրական բնութագրի և պատմության առանձնահատկությունների մասին;

Դասագիրք կազմողները անգլերենին լավագույնս պետք է տիրապետեն ոչ միայն հաղորդակցական մակարդակում, այլ նաև հաշվի առնեն բազմամշակութային և բազմալեզվյան տեսությունների շրջանակներում ձևավորված հայեցակերպերը, որոնց հիմքում ընկած է միջմշակութային հաղորդակցության ուսուցման մոտեցումը: Վերջինս ներառում է սեփական և օտարալեզու մշակույթների ընդհանրության և բազմազանության գիտակցում: Բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ մշակութային բովանդակության գիտելիքներին համահաղորդ կամ իրագեկ դառնալու առավել արդյունավետ միջոց է ոչ թե սոսկ Հայաստանի և անգլախոս երկրների պատմական իրադարձություններին, մշակույթին, աշխարհագրությանը ծանոթանալը ուսումնական աշխատանքի որոշակի ժամանակահատվածում, այլ տվյալ թեմաների շուրջ հաճախ հաղորդակցվելը: Նման գործընթացը նպաստում է ձեռք բերելու համապատասխան գիտելիքներ ուսուցանվող տվյալ երկրների

վերաբերյալ, օտար լեզվով հաղորդակցվելու այս կամ այն մշակութային թեմայով և սովյալ թեմայի շրջանակում հարստացնելու անհրաժեշտ բառապաշարը և այլ լեզվական միջոցները: Նման աշխատանքների շնորհիվ ձևավորվում է լեզվամտածողության որոշակի համակարգ, որը հետագայում կհանգի բազմողորտ ընդհանրացումների: Այս ամենը լավագույն պայման է միջմշակութային հաղորդակցման համար, որն այսօր գնալով հրամայական է դառնում: Այսօրինակ աշխատանքներ կարելի է իրականացնել հանրակրթական դպրոցներում, հատկապես 5-9-րդ դասարանների աշակերտների հետ: Այստեղ կարևորագույն գործոն է դպրոցական դասագիրքը, նրանում ընդգրկված լեզվանյութը և միջմշակութային տեղեկատվությունը:

Ներկայիս դասագրքերը հաճախակի ենթարկվում են փոփոխության. համապատասխանաբար փոփոխվում է նաև նրանցում ներառած ուսումնական նյութը: Ուսումնասիրելով միջին դպրոցի անգլերենի դասագրքերը՝ եկանք այն համոզման, որ միջմշակութային կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից առկա են որոշակի բացթողումներ՝ կապված թե՛ տեքստերի և թե՛ տեքստերին հաջորդող վարժությունների համակարգի հետ: Երբեմն նպատակասլաց չի զարգացվում միջմշակութային հաղորդակցական կոմպետենցիան: Ըստ ժամանակակից պահանջների միջմշակութային հաղորդակցական կարողություններ և հմտություններ ձևավորելու համար հարկ է դասագրքերում զուգահեռաբար անդրադառնալ սովյալ դեպքում անգլախոս երկրների և Հայաստանի մշակույթները ներկայացնող տեղեկատվությանը, քանի որ առանց դրա երկու և ավելի լեզվակիր երկրների մշակույթների երկխոսություն չի կարող իրականանալ:

Ուստի բազմակողմանի զարգացած և գրագետ սերունդ դաստիարակելու համար հարկ է նրանց ապահովել այնպիսի դասագրքերով՝ հագեցած բազմաբնույթ մշակութային և տեղեկատվական այլ ուսումնական նյութերով, որոնք ուղղված են աշակերտների միջմշակութային հաղորդակցության կոմպետենցիայի զարգացմանը: Այսպիսի հաղորդակցությունը ապահովում է անձի ոչ միայն բազմակողմանի զարգացում և կայուն գիտելիքների ձեռքբերում, այլ նաև կյանքի հմտությունների ձևավորում: Սրանք են զարգացնող կրթության՝ այսօրվա դպրոցի առջև դրված խնդիրները: Այս ամենով պայմանավորված է սույն հետազոտության արդիականությունը, որի համատեքստում ձևակերպվել են նրա նպատակն ու խնդիրները:

Հեղազոգրության նպատակն է բացահայտել միջմշակութային հաղորդակցության հայեցակերպը ՀՀ միջին դպրոցի անգլերենի դասագրքերում և մշակել միջմշակութային ուսուցման մեթոդական համակարգ:

Հեղազոհության օբյեկտն անգլերենի ուսուցման գործընթացն է ՀՀ միջին դպրոցում:

Հեղազոհության առարկան ՀՀ միջին դպրոցի անգլերենի դասագրքերում ստեղծված հայեցակերպի հիման վրա միջմշակութային հաղորդակցության զարգացման մեթոդական համակարգն է:

Հեղազոհության գիտական վարկածը

Անգլերենի դասագրքերի ստեղծման գործընթացում առաջին պլան է մղվում հաղորդակցական և զուգահեռաբար միջմշակութային հայեցակերպը, քանի որ, ուսումնասիրելով թե՛ հայկական, թե՛ օտարալեզու մշակույթները, աշակերտները կկարողանան հաղորդակցվել հավուր պատշաճի:

Ուստի միջին դպրոցում միջմշակութային հաղորդակցության մակարդակը կբարձրանա, եթե՝

- կատարվեն համապարփակ վերլուծություններ ժամանակակից հաղորդակցական մեթոդիկայի պահանջներին համապատասխան,
- մշակվեն միջմշակութային հաղորդակցության ձևավորման հայեցակերպային դրույթներ,
- մշակվի միջմշակութային հաղորդակցության կոմպետենցիան զարգացնող տեքստերի և վարժությունների համակարգ,
- ներդրվի միջմշակութային հաղորդակցությանն ուղղված ուսուցման նոր ռազմավարություն:

Ելնելով հետազոտության օբյեկտից, առարկայից և գիտական վարկածից անհրաժեշտ է լուծել հետազոտության հետևյալ **խնդիրները**.

- Ուսումնասիրել հաղորդակցական-լեզվական կոմպետենցիան՝ որպես օտար լեզուների ուսուցման հիմնական նպատակ:
- Բացահայտել «միջմշակութային հաղորդակցություն» հասկացության էությունն ու սահմանումները:
- Վերլուծել միջին դպրոցում գործող անգլերենի դասագրքերը և ճշգրտել դասագրքերի ստեղծման սկզբունքների ձևավորման օրինաչափությունները միջմշակութային հաղորդակցության զարգացման տեսանկյունից:
- Մշակել անգլերենի դասագրքերի ստեղծման և ներդրման արդյունավետությանը նպաստող միջմշակութային մեթոդական համակարգ, որը կնպաստի աշակերտների հաղորդակցական և միջմշակութային գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:

- Փորձարկել առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդներ ընտրությունը պայմանավորված է մեր ուսումնասիրության նպատակներով, խնդիրներով և առաջադրված վարկածով: Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- **տեսական՝** հետազոտության հիմնախնդրին առնչվող փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական և մեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,
- **էմպիրիկ՝** դիտարկում, աշակերտների անկետավորում, հարցում, թեստավորում, փորձարարական ուսուցում,
- **վիճակագրական՝** թեստավորման և փորձարարական ուսուցման արդյունքների տվյալների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության մեթոդաբանական հիմքում ընկած են հետևյալ տեսություններ և հայեցակարգեր ներկայացնող աշխատությունները՝ հաղորդակցական-ճանաչողական (Մ. Գ. Աստվածատրյան, Ի.Լ. Բիմ, Ն. Դ. Գալսկովա, Գ. Տրագեր, Ի. Հոլլ, Վ. Վ Սաֆոնովա), հոգեբանամանկավարժական (Ա. Ա. Լեոնտև, Լ. Ս. Վիգոտսկի, Ի. Ա. Կայիրով, Վ. Վ. Կրասկի), լեզվաբանական (Դ. Ս. Լիխաչով, Ա. Ֆ. Լոսև, Վ. Ի. Կարասիկ, Վ. Ա. Մասլովա, Ս. Գ. Տեր-Մինասովա, Ե. Մ. Վերեջազին և Վ. Գ. Կոստոմարով), կոմպետենտային մոտեցման (Ի.Ա. Զիմնյայա, Ե. Ն. Սոլովովա) հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման (Մ. Ս. Կազան, Դ. Հայմզ, Լեզոնների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ (CEFR)), հոգելեզվաբանական (Ա. Ա. Լեոնտև, Լ. Ս. Վիգոտսկի), միջմշակութային հաղորդակցության զարգացման (Վ. Ս. Բիբլեր, Ն. Բրուկս, Ռ. Պ. Միլլուդ, Լ. Ա. Սամովար, Վ. Վ. Սաֆոնովա, Ռ. Ի. Փորթեր, Ե. Ի. Պասսով, Յու. Բ. Պիկովա, Հ. Ֆիցջերալդ և այլք):

Հետազոտության մշակվածության աստիճանը

Վերջին տասնամյակներում կոմպետենտ մոտեցման տարբեր կողմեր դիտարկվել են Ի.Ա. Զիմնյայայի, Ե.Յա. Կոզանի, Ա.Կ. Մարկովայի, Կ.Գ. Միտրոֆանովի, Ա.Վ. Խոտորսկոյի և այլոց աշխատություններում:

Կարևորվել են հատկապես լեզվի, մշակույթի և հաղորդակցման փոխկապակցվածությանը (Մ.Գ. Աստվածատրյան, Բ.Մ. Եսաջանյան, Վ.Վ. Սաֆոնովա, Պ.Վ. Սիտև, Ս.Գ. Տեր-Մինասովա) նվիրված աշխատանքները:

Առանձնահատուկ նշանակություն ունեն այն հետազոտությունները, որոնք վերաբերում են միջմշակութային կոմպետենցիայի զարգացման հիմնախնդրին (Մ. Օ. Գյոդակյան, Բ. Մ. Եսաջանյան, Ի. Կ. Կարապետյան և այլոք):

Հեղափոխության գիտական նորույթը

- Մշակվել են միջմշակութային հաղորդակցության զարգացման հայեցակերպային դրույթներ և ստեղծվել է միջմշակութային կոմպետենցիա ձևավորող մեթոդական համակարգ:
- Համապատասխան վերլուծության արդյունքում բացահայտվել են անզլերենի՝ միջին դարոցում գործող դասագրքերում առկա դրական կողմերն ու բացթողումները՝ միջմշակութային կոմպետենցիայի ձևավորման լույսի ներքո:
- Փորձարարական ուսուցմամբ հաստատվել է մեր կողմից մշակված միջմշակութային հաղորդակցության զարգացման հայեցակերպը և մեթոդական համակարգը:

Հեղափոխության տեսական նշանակությունը

Մշակված միջմշակութային հաղորդակցության հայեցակերպը և մեթոդական համակարգը հիմք են հանդիսանում դասագրքերի ստեղծման գործընթացում հաղթահարելու առկա թերացումները լեզվական և մշակութային առումով՝ տեքստերի սկզբնաղբյուրների համամասնական ներմուծմամբ, թիրախային լեզվի և մշակույթի կապի, միջմշակութային երկխոսության ապահովմամբ:

Հետազոտության արդյունքները և եզրակացությունները կարող են հիմք հանդիսանալ դասագրքաստեղծման գործընթացում վերանայման և փոփոխություններ իրականացնելու համար:

Հեղափոխության գործնական նշանակությունը

Միջին դարոցի անզլերենի դասագրքերի միջմշակութային հաղորդակցությանը վերաբերող տեղեկատվությունը, դասագրքերի ստեղծման գործընթացում մեր կողմից կատարված առաջարկները, տեքստերի, վարժությունների համակարգը կարող են օգտակար լինել նոր դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծման, նոր դասընթացների նախագծման, որոշակի ծրագրերի կազմման գործում, ինչպես նաև հանրակրթական դարոցում դասավանդող ուսուցիչների համար:

Հեղափոխության հիմնական փուլերը

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ փուլերով՝

Առաջին փուլում (2006-2007թթ.) կատարվել է հետազոտության թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականության ուսումնասիրություն և քննության են առնվել միջմշակութային հաղորդակցությանը վերաբերող տարբեր մոտեցումները:

Երկրորդ փուլում (2007-2010թթ.) կատարվել է հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ լեզվաբանական, հոգեբանամանկավարժական, լեզվական և մեթոդական վերլուծություն: Որոշարկվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածն ու պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները:

Երրորդ փուլում (2010-2013թթ.) հիմնավորվել են դասագրքերում դասանյութերի ընտրության սկզբունքները: Կատարվել է ձևավորող փորձարարական ստուգման նյութերի նախնական մշակում:

Չորրորդ փուլում (2013-2015թթ.) կատարվել է լեզվամշակութային հաղորդակցությունը զարգացնող դասանյութերի ընտրությունը և մշակումը, որն իրականացվել է՝ առաջին պլան մղելով հաղորդվող տեղեկատվության գործաբանական և հանրամշակութային բաղադրիչները. իրականացվել է փորձարկումը, ամփոփվել և վերլուծվել են ստացած արդյունքները:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները.

1. Միջին դպրոցի անգլերենի դասագրքերի որակական հատկանիշները կախված են հաղորդակցական-լեզվական կարողությունների զարգացնող համալիր և համակարգված դասանյութերի ընտրությունից, որտեղ շեշտը կդրվի հանրամշակութային և միջմշակութային հաղորդակցական կոմպետենցիաները զարգացնելու ուսումնական նյութերի վրա:

2. Աշակերտների հանրամշակութային և միջմշակութային կոմպետենցիաների ձևավորմանն ու զարգացմանը մեծապես կարող են նպաստել մեր կողմից մշակված միջմշակութային հաղորդակցության հայեցակետայր և մեթոդական համակարգը:

3. Ուսումնասիրվող լեզվի երկրի պատմության, մշակույթի, ավանդույթների իմացությունը կարևոր պայման է հանրամշակութային և միջմշակութային կոմպետենցիաների ձևավորման համար, հատկապես եթե սովորողները հնարավորություն են ստանում զուգահեռաբար ուսումնասիրել նաև սեփական լեզվամշակութային իրողություններն անգլերենով:

4. Միջին դպրոցի աշակերտների միջմշակութային կոմպետենցիայի ձևավորումը ենթադրում է լեզվանյութի ընտրության հաղորդակցական սկզբունքների կիրառում և ուսումնախոսքային տարբեր իրադրություններում անկաշկանդ հաղորդակցում:

Հեղազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվում են օտար լեզուների դասավանդման ոլորտում ձևավորված առաջավոր տեսությունների համապարփակ վերլուծությամբ, հիմնավորվում տեսական և գործնական մեթոդների համալիր

գործածությամբ, հետազոտության օբյեկտի և առարկայի դիֆակտիկական ու մեթոդական առանձնահատկություններին համապատասխան, հետազոտության արդյունքում ստացված տվյալների հուսալիությամբ:

Հեղափոխության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Այն ընդգրկում է 5 գծապատկեր, 6 աղյուսակ, 3 տրամագիր, հարցաթերթիկներ և հավելվածներ: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 122 համակարգչային էջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, խնդիրները, հետազոտության գիտական նորույթը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, հետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը, հետազոտության կատարման փուլերը, արդյունքներն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ ***«Միջմշակութային հաղորդակցության փրեսական հիմքերը»*** գլխում ներկայացվել է լեզվական-հաղորդակցական կոմպետենցիան՝ որպես խոսքային գործունեության ընկալողական և վերարտադրողական տեսակների տիրապետում և հաղորդակցման գործընթացում անձի պատշաճ դրսևորման կարողություն, ինչպես նաև քննության են առնվել միջմշակութային հաղորդակցության զարգացման հիմնախնդիրները ժամանակակից կյանքում:

Առաջին՝ «Հաղորդակցական-լեզվական կոմպետենցիան որպես լեզուների ուսուցման գլխավոր նպատակ» ենթագլխում լուսաբանվել են լեզվական-հաղորդակցական կոմպետենցիայի (communicative language competence) ձևավորման հիմնական դրույթները կրթական գործընթացում:

Հաղորդակցական կոմպետենցիան ներառում է գիտելիքներ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են հաղորդակցվող կողմերին ստեղծելու խոսքային վարքագծի սեփական ծրագրեր և համապատասխան շփման իրավիճակներ:

Վերջինս արտացոլում է լեզվական միավորների իմաստաբանական գիտելիքները, խոսքի ստեղծման և փոխանցման մեխանիզմների

տիրապետումը՝ կախված տվյալ խոսքամշակութային իրավիճակից՝ ներառելով նաև հաղորդակցվող կողմի, վայրի, ժամանակի և շփման պայմանների պարամետրերը:

Սույն ենթագլխում սահմանվում է նաև հաղորդակցական-լեզվական կոմպետենցիան՝ ըստ CEFR-ի (2001): Առանձնացվում են այդ հասկացության հիմնական բաղադրիչները՝ լեզվական, հանրալեզվաբանական, գործաբանական, և դրանց դրսևորումը խոսքային գործունեության տարբեր տեսակներում:

Երկրորդ՝ «Միջմշակութային հաղորդակցության հիմնախնդիրները» ենթագլխում մեկնաբանվել են «միջմշակութային հաղորդակցություն» հասկացության տարբեր սահմանումները, որոնցում հիմնավորվել են միջմշակութային հաղորդակցության հիմքում մշակույթների միջև առկա նմանություններն ու տարբերությունները: Վերջիններս ի հայտ են գալիս ազգային տարբեր մշակույթների ձևավորման գործընթացում:

Սույն ենթագլխում ներկայացվում են միջմշակութային հաղորդակցության գործընթացում առկա կոնֆլիկտային իրավիճակների առաջացման պատճառները: Արդյունքում բացահայտվում է, որ կոնֆլիկտը հիմնականում փոխհարաբերությունների ընթացքում առաջացած որոշ հակասությունների պարզաբանման սուր միջոց է, որը վերաճվում է կոնֆլիկտի մասնակիցների հակամարտության, և որին հաջորդում են բացասական հոյզերը:

Հետազոտության երկրորդ՝ **«Անզլերենի դասագրքերի ստեղծման հիմնական պահանջները»**, գլխում մանրամասն վերլուծվել են հանրակրթական դպրոցներում գործող 5-9-րդ դասարանների անզլերենի դասագրքերը և իրականացվել է փորձարարական ուսուցումն ու ստուգումը:

Երկրորդ գլխի առաջին՝ **«Միջին դպրոցի անզլերենի դասագրքերի ստեղծման միջմշակութային հաղորդակցության սկզբունքը»** ենթագլխում հանգամանորեն վերլուծության են ենթարկվել հանրակրթական դպրոցներում գործող 5-9-րդ դասարանների անզլերենի երկու տարբեր դասագրքերը (հեղինակներ՝ Գ. Գասպարյան և Լ. Գրիգորյան), և առանձնացվել են դասագրքերում միջմշակութային հաղորդակցությունը զարգացնող նյութերի դրական և բացասական կողմերը:

Սույն ենթագլխում հատկապես առաջ է քաշվում այն դրույթը, որ դասագրքերում մշակույթը չի ուսուցանվում առաջնահերթության սկզբունքով: Ըստ այդմ՝ նշված դասագրքերում միջմշակութային հայեցակերպը համապատասխան տեքստերով և լուսաբանող նյութերով չի ներկայացվում:

Շեշտադրվում է նաև այն եզրահանգումը, որ հայկական մշակույթը չի ներկայացվում մշակութային տեքստերի, նկարների, սխեմաների, քարտեզների միջոցով:

Երկրորդ՝ **«Միջին դարոցի անգլերենի դասագրքերի վերլուծության հիմնախնդիրը՝ տոների և ավանդույթների տեսանկյունից»**, ենթազխում զուգահեռաբար ուսումնասիրվել են դասագրքերում ընդգրկված անգլախոս երկրների տոներին և ավանդույթներին վերաբերող դասանյութերը և որոշարկվել, որ դասագրքերում տեղ գտած տեքստերը և վարժությունները ծավալային առումով բավարար չեն տվյալ տոնը կամ ավանդույթը լիարժեք մատուցելու համար: Այս ենթազխում ներկայացված է նաև հիմնախնդրին առնչվող տեքստերի և վարժությունների համակարգ:

Երրորդ՝ **«Ուսուցման գործընթացում անգլերենի դասագրքերի արդյունավետության փորձարարական սպուտումը»** ենթազխում, ներկայացված են մեր կողմից իրականացված փորձարկումը և արդյունքում ստացված տվյալները: Փորձարկման նպատակը՝ մշակել միջմշակութային հաղորդակցության զարգացման արդյունավետությունը ապահովող մեթոդիկա, ինչպես նաև բացահայտել միջին դարոցում սովորողների միջմշակութային հաղորդակցական կարողությունները:

Փորձարարական ուսուցումն իրականացվել է 2013-2014 ուսումնական տարում: Փորձարարական ուսուցման վայրը՝ Գյումրու թիվ 5, 6, 7, 9 և 31 հիմնական և Մայիսյանի միջնակարգ դպրոցներ:

Փորձարարական ուսուցման մասնակիցների թիվը՝ 100, դասարանը՝ 9-րդ:

Սույն ենթազխում նախքան փորձարարական ստուգումը կազմվել է հարցաշար աշակերտների միջմշակութային գիտելիքների իմացությունը ստուգելու համար:

Հարցաթերթիկը բաղկացած էր 20 հարցից: Հարցաշարի միջոցով ստուգվել է միջմշակութային կոմպետենցիայի առումով աշակերտների պատրաստականությունը: Հարցերից 10-ը վերաբերում էին անգլախոս երկրների պատմամշակութային փաստերին, մյուս 10-ը՝ Հայաստանի մշակույթին:

Արդյունքների ամփոփիչ վերլուծությունը ցույց է տվել, որ աշակերտների մեծ մասը սխալ են պատասխանել են տրված հարցերին՝ չտիրապետելով Բրիտանիայի, Շոտլանդիայի, ինչպես նաև Հայաստանի երկրագիտական տեղեկատվությանը: Մեր կարծիքով խնդիրը ոչ թե մեր աշակերտների՝ տվյալ երկրի մշակույթին, պատմությանը կամ տոներին ու ավանդույթներին ծանոթ չլինելն է, այլ խնդրո առարկա թեմաները ներկայացնելու համար անգլերենից բավարար իմացություն, գիտելիք չունենալը:

Ուստի կարևորելով միջմշակութային կոմպետենցիան զարգացնող դասանյութերը դասագրքերում՝ նույն դպրոցների աշակերտների հետ իրականացվել է փորձարարական աշխատանք:

Փորձարարական խմբի հետ անցկացվել են արտաժամյա պարապմունքներ, որոնց ընթացքում մատուցվել են մեր կողմից մշակված տեքստերը: Վերջիններս իրենց մեջ ներառել են անգլախոս երկրների և Հայաստանի պատմամշակութային արժեքների, ավանդույթների, տոների, լեգենդների վերաբերյալ դասանյութեր: Տեքստերն ուսուցանելու համար կիրառվել են բազմաբնույթ ինտերակտիվ վարժություններ:

Ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից պարապմունքների ընթացքում կարևորվել է նաև հեռահաղորդակցման միջոցների կիրառումը: Դասերի ընթացքում աշակերտները հաճախ դիտում էին մշակութային բովանդակության կարճամետրաժ վավերագրական ֆիլմեր և ունենդորում տեքստեր: Այս ամենը նպատակաուղղված էր ձևավորելու և զարգացնելու աշակերտների միջմշակութային հաղորդակցության կոմպետենցիան:

Այնուհետև ստուգողական և փորձարարական խմբի աշակերտները կրկին պատասխանել են մեկ այլ հարցաշարի հարցերին, որոնցից 10-ը վերաբերում էր Հայաստանին, ևս 10-ը՝ անգլախոս երկրներին:


Ստացված արդյունքներից պարզ է դարձել, որ ստուգողական խմբի աշակերտները դժվարացել են ճիշտ պատասխանել այնպիսի հարցերին, որոնք վերաբերում են դասագրքերում թերի ներկայացված թեմաներին՝ անգլախոս երկրների տոներին և ավանդույթներին, Հայաստանի մշակույթին, աշխարհագրությանը, պատմությանը:

«Ո՞րը Հ. Թումանյանի հեքիաթներից չէ» հարցին աշակերտների մեծ մասը տվել էր սխալ պատասխան: Հեքիաթների անգլերեն թարգմանությանը նրանք ծանոթ չէին, որն էլ շփոթեցրել էր նրանց: Օրինակ՝ Կացին ախպեր- Brother Axe, Սուտասանը- The Liar, Ճամփորդները- The Travellers.

Փորձարարական աշխատանքից ստացված արդյունքները համեմատական կտրվածքով ներկայացված են ստորև.

Տրամագիր 1

Ստուգողական (100աշ.) և փորձարարական (100աշ.) խմբերի ամփոփիչ արդյունքները



Վերը նշված տրամագրից բխում է այն համոզմունքը, որ հետազոտության ավարտին գրանցվել են դրական տեղաշարժեր:

Փորձարարական աշխատանքների արդյունքների համեմատական վերլուծությունը վկայում է մեր կողմից առաջադրված մեթոդական համալիրի արդյունավետությունը: Կարելի է փաստել, որ նպատակաուղղված և մեթոդապես ճիշտ կազմակերպված փորձարարական աշխատանքների արդյունքում փորձարարական խմբի դպրոցականների հանրամշակութային և միջմշակութային հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորվածության մակարդակը բարելավվել է:

Փորձարարական աշխատանքի անցկացման նպատակով մշակված տեքստերի և վարժությունների համակարգը ուղղված էր զարգացնելու աշակերտների միջմշակութային հաղորդակցության մի շարք կարողություններ.

- ոչ համարժեք մշակութային իրողությունները բացահայտելու կարողություն,
- Հայաստանի և անգլախոս երկրների մշակութային խորհրդանիշները համեմատելու կարողություն,
- Հայաստանի և անգլախոս երկրների մշակութային իրադարձությունները համեմատելու կարողություն,
- Հայաստանի և անգլախոս երկրների պատմական իրադարձությունները համեմատելու կարողություն,
- Հայաստանի և անգլախոս երկրների քաղաքական համակարգը համեմատելու կարողություն,
- Հայաստանի և անգլախոս երկրների կրթական տարբերությունները բացահայտելու կարողություն,
- Հայաստանի և անգլախոս երկրների աշխարհագրական տվյալները համեմատելու կարողություն,
- Հայաստանի և անգլախոս երկրների պատմամշակութային եզրույթները բացահայտելու կարողություն,
- անհամարժեք բառապաշարը բացահայտելու ունակություն,
- բնագրային տեքստերը ընթերցելու և վերարտադրելու կարողություն:

Փորձարարական աշխատանքի վերջում կարևորվեց այն տեսակետը, որ միջմշակութային հաղորդակցության կոմպետենցիան կենսական նշանակություն ունեցող երևույթ է: Հաղորդակցման գործընթացում հատկանշական է ոչ միայն զրուցելու, բանավիճելու, սեփական տեսակետը հայտնելու կարողություններ, այլ նաև ուրիշի կարծիքը հարգելու, ուրիշի տեսակետը օբյեկտիվ գնահատելու կարողություններ, որոնք միջանձնային փոխհարաբերությունները կարգավորելու կարևորագույն պայմանն են:

Այնուհետև, հարցաշար է կազմվել դպրոցներում անգլերեն դասավանդող ուսուցիչների համար: Հարցաշարը լրացրել են Շիրակի մարզի տարբեր համայնքների, ինչպես նաև Գյումրու դպրոցներում դասավանդող 43 ուսուցիչ: Ուսուցիչներից 15-ը դասավանդում էին Լ. Գրիգորյանի, մնացած 28-ը՝ Գ. Գասպարյանի դասագրքերով: Ուսուցիչներին վաղորոք հանձնարարվել է ուսումնասիրել Լ. Գրիգորյանի և Գ. Գասպարյանի 5-9-րդ դասարանների անգլերենի դասագրքերը միջմշակութային կոմպետենցիայի տեսանկյունից:

Հարկ է նշել, որ «Դասագրքերից զատ օգտվում էք այլ ձեռնարկներից» հարցին 15 ուսուցիչ դրական պատասխան էր տվել: Տեղեկատվական վերելքի այս ժամանակաշրջանում, որքան էլ հագեցած լինի դասագիրքը, այնուամենայնիվ կարիք կա այլ ձեռնարկներից օգտվելու, որոնք կօգնեն դասն առավել հետաքրքիր և բովանդակալից դարձնելու:

Առավել ուշագրավ են «Տրամադրված դասաժամերը բավարարու՞մ են դասագրքերում ներմուծված դասանյութերն ամբողջությամբ ուսուցանելու համար» հարցի պատասխանների արդյունքները: Ընդամենը 17 ուսուցիչ է դժգոհել քիչ ժամաքանակից այն պարագայում, երբ միջին օղակում օտար լեզվին հատկացվում է 2 դասաժամ: Հավանաբար այլ տարբերակ ընտրած ուսուցիչներին այդ օղակում հատկացվել է 2-ից ավելի դասաժամ, որը տրամադրվել է նրանց ուսումնական պլանի պարտադիր բաղադրիչից:

Հատկանշական են «Հայկական տոների և ավանդույթների տեսանկյունից ինչպե՞ս կգնահատեք Լ. Գրիգորյանի դասագրքերը» հարցի պատասխանները: Չորս ուսուցիչ տվել էին բացասական պատասխան: Պետք է ենթադրել, որ պատասխանող ուսուցիչները լիարժեքորեն չեն ուսումնասիրել քննարկվող դասագրքերը կամ իրենք նույնպես այդ առումով լրացուցիչ իրազեկման կարիք ունեն, քանի որ Լ. Գրիգորյանի դասագրքերում հայկական մշակույթին, տոներին և ավանդույթներին պատշաճ տեղ է հատկացված:

Հարցումներ ենք կատարել նաև փորձարարական խմբի աշակերտների ծնողների հետ: Քննարկման ընթացքում նրանք պետք է պատասխանեին նախօրոք կազմված հարցերին:

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ ծնողները իսկապես կարևորում են իրենց երեխաների՝ մշակութային բովանդակությամբ գիտելիքների իմացությունը:

Փորձարարական աշխատանքի ավարտին եկանք այն համոզման, որ, իրոք, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի դասագրքեր, որոնցում ընդգրկված կլինեն Հայաստանի և անգլախոս երկրների մշակույթներին վերաբերող դասանյութեր: Սա աշակերտներին հնարավորություն կտա համեմատելու երկու երկրներին վերաբերող միևնույն թեմաները, գտնելու տարբերությունները և նմանությունները, անելու կարևոր հետևություններ՝ զարգացնելով համապատասխան լեզվամիջոցներ գործածելու կարողություններ: Սրանով է պայմանավորված միջմշակութային հաղորդակցության հայեցակերպային դրույթների ներառումը միջին դպրոցի անգլերենի դասագրքերում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաղորդակցական-լեզվական կոմպետենցիան՝ որպես լեզվական, հանրալեզվաբանական և գործաբանական կոմպետենցիաների ամբողջություն, իր մեջ ներառում է գիտելիքներ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են հաղորդակցվող կողմերին՝ ստեղծելու խոսքային սեփական հաղորդակցություն և համապատասխան շփման իրավիճակներ:
2. Դասագրքատեղծ հեղինակները պետք է մշակեն միջմշակութային հաղորդակցության ձևավորման հայեցակերպ՝ հստակորեն ներկայացնելով օտար լեզվի և մշակույթի բաղադրիչները համապատասխան դասագրքի բոլոր բաժիններում և զարգացնելով միջմշակութային հաղորդակցություն իրականացնելու կարողությունները տարբեր մշակույթների երկխոսության համատեքստում:
3. Հաշվի առնելով թիրախային լեզուն ներկայացնող մշակույթի ուսուցման առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է դասագիրք ստեղծելիս հաշվի առնել դաստիարակչական, գաղափարախոսական և, իհարկե, ուսուցողական գործառույթները: Նշված գործառույթները երաշխավորում են սովորողներին մշակույթի նկատմամբ հանդուրժողականությամբ դաստիարակելու կարևորագույն արդյունք:
4. Միջմշակութային հաղորդակցության կարողությունները զարգացնող տեքստեր և վարժություններ ընտրելիս դասագրքերի հեղինակները պետք է շեշտը դնեն միջմշակութային հաղորդակցության գործնական հմտությունների և կարողությունների ձևավորման վրա:
5. Միջին դպրոցի անգլերենի գործող դասագրքերի վերլուծության արդյունքում բացահայտվել են որոշակի բացթողումներ: Մասնավորապես՝ համակարգված չէ միջմշակութային հաղորդակցությունը զարգացնող տեղեկատվության, անգլախոս երկրների և Հայաստանի տոներին և ավանդույթներին, աշխարհագրությանը, պատմությանը, տեղեկատվական տոխնոլոգիաներին և առօրյա կենցաղային թեմաներին վերաբերող դասանյութերի ընտրության, ներմուծման մեթոդիկան:
6. Հիմնախնդրի վերաբերյալ իրականացված փորձաքննությունը հաստատեց առաջարկվող մոտեցման հիմնավորվածությունը՝ ներմուծելու միջմշակութային հաղորդակցության կոմպետենցիան զարգացնող դասանյութեր նոր դասագրքերի ստեղծման գործընթացում:

Արենախոսության հիմնական դրույթներն արտացոլած են հեղինակի հեղուկալ հրապարակումներում.

1. **Նալբանդյան Ն.** Միջմշակութային հաղորդակցության դերն ու նշանակությունը օտար լեզուների ուսուցման մեջ և նրա հագեցվածությունը ՀՀ միջնակարգ դպրոցների անգլերենի դասագրքերում, Օտար լեզուները բարձրագույն դպրոցում: Գիտական աշխատությունների ժողովածու.-Եր.: Երևանի պետական համալս. հրատ., 2006թ., էջ 196-203:

2. **Նալբանդյան Ն.** Անգլիայի և անգլիախոս երկրների տոներն ու ավանդույթները որպես օտար լեզվի դասի բաղկացուցիչ մաս, Օտար լեզուները բարձրագույն դպրոցում: Գիտական աշխատությունների ժողովածու.-Եր.: Երևանի պետական համալս. հրատ., 2007թ., էջ 233-241:

3. **Նալբանդյան Ն.** Միջմշակութային հաղորդակցության խնդիրները օտար լեզուներ ուսուցանելիս, Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար,- Եր.: Երևանի համալս. հրատ., 2009թ., էջ 88-94:

4. **Նալբանդյան Ն.** Միջին դպրոցի անգլերենի դասագրքերի արդյունավետության բացահայտումը միջմշակութային հաղորդակցության ուսուցման տեսանկյունից, Մխիթար Գոշ, գիտական հոդվածներ- Վանաձոր: ՍԻՄ տպագրատուն, 2015թ., 2(43), էջ 72-75:

5. **Կարապետյան Կ., Նալբանդյան Ն.** Անգլերենի դասագրքերի ստեղծման հաղորդակցական սկզբունքները, Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, գիտական հանդես № 1-2 (20)- Եր.: Երևանի պետական համալս. հրատ., 2016թ., էջ 264-269:

6. **Նալբանդյան Ն.,** Թարգմանությունը հենքային գիտելիքի ուսուցման կարևորագույն միջոց, «Աստղիկ» գիրք թարգմանչաց (տարեգիրք) № 27- Եր.: Սահակ Պարթև հրատ., 2016թ., էջ 147-158:

НАЛБАНДЯН НЕЛЛИ АШОТОВНА

КОНЦЕПЦИЯ МЕЖКУЛЬТУРНОЙ КОММУНИКАЦИИ В УЧЕБНИКАХ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА В СРЕДНЕЙ ШКОЛЕ РА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13. 00. 02- “Методика преподавания и воспитания” (английский язык).

Защита диссертации состоится 1 апреля 2019 г., в 12:00 на заседании специализированного совета „Педагогика” 020 ВАК при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010 Ереван, ул. Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

Актуальность темы. В процессе преподавания английского языка учебник играет незаменимую роль. В настоящее время учебники подвергаются постоянным изменениям, соответственно меняются содержащиеся в них учебные материалы. Изучая учебники английского языка для средней школы, мы пришли к выводу, что с точки зрения развития межкультурной компетенции имеются определенные недостатки, связанные с отбором текстов и упражнений. Необходимо уделить большое внимание такому важнейшему компоненту, как межкультурная компетенция. Для формирования межкультурных коммуникативных умений и навыков необходимо наличие информации, представляющей культуры англоязычных стран и Армении, так как без этого немислим диалог между двумя и более культурами.

Таким образом, для воспитания разносторонне развитого, мыслящего и грамотного поколения необходимо обеспечить учащихся такими учебниками, которые насыщены разнообразными межкультурными и информационными материалами, относящимися не только к иностранному, но и к родному языку.

Цель исследования

Выявить основы создания учебников английского языка в средней школе с точки зрения межкультурной коммуникации и разработать методическую систему, направленную на повышение эффективности создания и внедрения учебников английского языка.

Задачи исследования

- Раскрыть понятие коммуникативной языковой компетенции как главной цели преподавания иностранного языка.
- Уточнить понятие «межкультурная коммуникация».
- Проанализировать учебники английского языка средней школы и выявить закономерности формирования принципов создания учебников с точки зрения развития межкультурной коммуникации.

- Разработать методическую систему, способствующую эффективному созданию и применению учебников английского языка, что поможет сформировать и развить коммуникативные и практические знания, умения и навыки учащихся.
- Подтвердить эффективность предложенной методической системы посредством соцопросов и опытного обучения.

Научная новизна исследования

- Обоснована необходимость в межкультурном подходе в плане воссоздания как положительных, так и отрицательных когнитивных практик.
- Разработана методическая система на основе текстов и упражнений, развивающих межкультурную компетенцию.
- Опытным путем обоснована эффективность методической системы процесса создания учебника и преодоления межкультурной интерференции.

Теоретическое значение исследования

Проведенный анализ выявил основные задачи изучения межкультурной коммуникации.

Выявлен несистемный характер отбора и применения в учебниках материалов, способствующих развитию межкультурной коммуникации.

Предложенная методика является основой для преодоления существующих недостатков посредством обеспечения соответствующей языковой и культурной информации, внедрения аутентичных текстов, связи изучаемого языка и культуры, реализации межкультурного диалога.

Практическое значение исследования

Предложен подход к отбору и использованию текстов, упражнений межкультурного характера в учебниках английского языка средней школы. Рекомендации по отбору учебно-познавательной информации могут быть полезны для создания новых учебников и учебных пособий, планирования новых учебных предметов, учебных составлений программ, а также для учащихся и учителей.

Результаты исследования и выводы могут служить базой для составления и создания новых программ курсов учебников и учебных пособий, планов уроков.

Структура и объем исследования

Диссертация объемом 122 страниц компьютерного текста состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы, 5 схем, 6 таблиц и 3 диаграмм.

NALBANDYAN NELLI ASHOT

THE INTERCULTURAL COMMUNICATION CONCEPT IN ENGLISH TEXTBOOKS OF THE MIDDLE SCHOOL IN THE REPUBLIC OF ARMENIA

Thesis for the degree of Candidate of Pedagogical Sciences, speciality 13.00.02- "Teaching and Education Methodology" (English).

The defense of the thesis will be held on April 1, 2019 at 12:00 at the session of Special Board 020 "Pedagogy" SCC (Supreme Certifying Committee) to award scientific degrees at Kh. Abovyan Armenian State Pedagogical University.

Address: 0010, Yerevan, Tigran Mets ave., 17.

SUMMARY

The relevance of the research. The textbooks are of a great importance in the process of teaching English. Currently the textbooks undergo constant changes and correspondingly the academic-cognitive materials included are changed. Having reviewed English textbooks designed for the middle school in Armenia we came to the conclusion that there are many gaps in terms of developing intercultural competence both in texts and exercises. The primary focus should be on the important principle of cultural competence and on development of intercultural communicative skills. The textbooks should provide content about the culture of the English speaking countries and Armenia because without that the dialogue between two and more cultures is impossible to communicate. In the middle school textbooks fail to offer any content about holidays, customs and traditions of the English speaking countries and Armenia, which are an important component of the culture.

To educate a generation of open-minded, well-informed and erudite individuals through wide-range information on culture and other issues relevant both for a foreign language and the mothertongue.

The aim of the research is to identify the basics of creating the middle school textbooks with a focus on resources that develop intercultural communication with an aim of developing resources to make the textbooks more effective.

The main objectives of the research

- to analyse the communicative language competence as the main goal of language teaching.
- to specify the concept of "intercultural communication".
- to analyze the textbooks of the middle school and identify the peculiarities that form the principles of creating textbooks for developing cross-cultural communication.

- to implement a training system that will form intercultural communicative competence and will enhance the student's communicative and pragmatic knowledge, the development of abilities and skills.
- to confirm the experiment and survey results and the effectiveness of the research through testing.

The scientific novelty of the research

- The relevant analysis revealed the similarities and differences, advantages and disadvantages in the English textbooks of the middle school, in the light of intercultural approach.
- A training system of texts and exercises is elaborated.
- The research work proves the effectiveness of the elaborated methodological system which overcomes the cultural bilateral difficulties.

Theoretical value of the research

The analysis has identified the main problem of intercultural communication.

Non-systematised teaching materials are disclosed.

The elaborated methodology overcomes the shortcomings by providing linguistic and cultural information, developing intercultural dialogues, establishing the connection between the target language and its culture and introducing authentic texts.

The results and conclusions of the research can contribute to transformations in the process of creating textbooks.

Practical value of the research

The content on intercultural communication in the textbooks of the middle school, our recommendations regarding the process of developing textbooks, the system of texts and exercises can be helpful in developing new textbooks and guides, designing new courses, i.e teaching through projects .

Structure and volume of the thesis

The research paper is presented on 122 computer pages; it includes an introduction, 2 chapters, a conclusion, references, 5 charts, 6 tables and 3 diagrams.